

ԾԱԼԻԿ Հաբաթը երկու ան-
գամ կը հրատարակուի Զարեք-
շաբթի և Շաբաթ օդերն : —
տարեկան բաժանորդադրութեան
գինն է 100 զրուշ արծաթ : —
Վեցամսեայն 50 . — Գաւառաց
չոմար 115 զրուշ . — Վեցամ-
սեայ 60 . — Ծանուցման տողը
5 զրուշ :

ԽՄԲԱԳԻԲ



40 Фигу

ՓԱՐԱ 40

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային Տեսութիւն (Գործ և արդիւնք).—
Միջին անեան վարժարան—Մանկական պար-
տէզ. — Մեջնում. — Վրիպակ. — Պատուանը.
շան. — Տնտեսական. — Գրաբառ և Խաղ-
կախտ. — Քաղաքակրթութեան չորհիները—
Բիսօլը Էլլէնձէ. — Խմիլիկ օլոր. — Վի-
պասանութիւն՝ Անձեալ աղջիկը. — Ծա-
նուցմունք

ԱՐ ՀՅԹԵՐՑՈՂ

Թեղթիս Խմբագրութեան հիւան-
դագին վիճակն արդէն յայտնի լինե-
լով մեր աղնիւ Ընթերցողաց և նկա-
տելով մեծարոյ բժշկաց պատուելը
վասն հանդարտութեան, որ անհրա-
ժեշտ դատուած է մանաւանդ ներ-
կայ եզանակիս, ակամայ օրոշեցինք
երկուշաբախի չափ միայն շաբաթ օ-
րերն հրատարակել :

Այսու մեր ազնիւ Ընթերցողք մի-
այն մի քանի թուոյ կորուստ մը պիտի
ընեն, զոր սակայն կը խստանանք ա-
ռաջին առթիւ փոխարինել, յուսալզվ
թէ մեր այս ակամայ տնօրինութիւն—
որ ինչպէս յայտնի է խիստ սակաւատեւ
պիտի լինի—խորին տհաճութիւն չը
պատճառեր մանաւանդ այն պատ-
ճառաւ երբ բոլորովին անկախ է մեր
կամքէն:

Ազգական

S U N H P H U

ԳՈՐԾ ԵՒ ԱՐԴԻԼԻՆՔ

♀

Նախորդ Ազգային Տեսութեամբ
խօսեցանք արդի Պատ. Տնտեսական
խորհրդոյ գործունէութեան մասին .
զրենք այժմ սահմանադրական նոր շըր-
ջանի, այն է, 1890—91 և 1891—92
ամաց Ելմտացոյցի առթիւ, զոր Տըն-
տեսական խորհուրդը պատրաստած և
ուշադրաւ տեղեկագրով մառ Պատկ.
Քաղ. ժողով մատուցած է :

Այդ տեղեկագրի մէջ Տնտես. խոր-
հուրդը լուրջ տեսութենէ մը յետոյ
կեդր. Մնտուկի վիճակին վրայ վի-
ճակ, որ հազիւ կը ծառայէ Պատրի-
արքարանի օրըստօրէական անհրաժեշտ
պէտքերը գոհացնելու. — կ'առաջարկէ
բաւականանալ կամ սովորական ելմը-
տացոյցով և կամ բարձրացնել ելմտա-
ցոյցի ծախուց մասն տարեկան առ նը-
ւազն 800,000 զրշի և իւր այս տեսու-
թիւն կը հիմնէ ներքին յոյժ կենսա-
կան պիտոյից վրայ .

Օրինակի համար , նկաելով որ սո-
վորական ելմտացոյցի մէջ նշանակեալ
20,000 դրշ վարկը բնաւ նշանակութիւն
չունի հոգուական այցելութեան հա-
մար , մանաւանդ արդի պարագայից
մէջ , որուած ամեն ժամանակէ աւելի

գաւառոք պէտք ունին . իրացակայութեան Առաջնորդաց , գէթ ալցելու հօվիւներու , մինչդեռ այդ 20,000 զուրուշն կը գործածուի Պուրկազի և Պէպէքի քահանայից ամսականին և այլոց ի նպաստ , նկատելով որ , կըթական ծախք անուամբ նշանակեալ 20,000 զրուշն յատկացեալ է մեծ մասամբ կըթական Ցեսչի ամսականին և մի քանի անկարող վարժապետաց նոյնապէս ի նպաստ , իրաւամբ դիտել կուտայ թէ հովուական և կըթական անուամբ նշանակեալ վարկերն չեն ծառայեր իւրեանց բուն նպատակին , զի կըթական Ցեսչի ամսականն կը պատկանի «պաշտօնէից ամսականք» կոչուած գլխին , ինչպէս և յիշեալ քահանայից և անկարող վարժապետաց յատկացեալ ամսականներն ալ «նպաստ» կոչուած գլխին . որ յատուկ տեղ ունին ելմտացոյցի մէջ , ցաւ կը յայտնէ թէ Ազգ . Կեդը . Վարչութիւնն ցարդչէ կրցած անհրաժեշտ հարկ եղած կերպով ի գործ դնել իւր հոգածութեան պարտիքն հանդէպ գաւառաց և մղում տալ կըթական գործին՝ նըպաստելով բարձրագոյն վարժարանի մը հաստատման և կամ ընդունակութիւն և յարմարութիւն ունեցող ուշիմ պատանիներ բարձր կըթութիւն ստանալու համար ամեն տարի զրկել յներոպա գէթ որսչ ժուռով մը :

Տնտեսական խորհուրդը իւր այս
կարեւոր տեղեկագրի մէջ նաեւ կը

խօսի Արձանագրութեան Դիւանի մը հաստատմ ան վրայ , որ Սահմանադրութեան մէջ արդէն նախատեսեալ է , բայց մինչեւ ցարդ գոյութիւն ունեցած չէ , մինչդեռ անհրաժեշտ է որ հաստատուի ի պատճառս այն բազմաթիւ ոգուտներու , զորս թուելն աւելորդ է :

Ահաւասիկ զրեթէ այս է ամփոփումն յիշեալ տեղեկագրի . որ մատնանիշ կ'ընէ մեր կենսական պէտքերէ մանաւանդ կարեւորագոյնները , նշանակելով այս առթիւ թէ Արմաշու Դպրեվանուց և թէ Հալաթիոյ կեդրոնական վարժարանի նման կարեւոր հաստատութիւններն , որ սակայն արդիւնք են բարեսէր ազդայնոց ջերմ հոգածութեանն և օժանդակութեանը :

Գոհ ենք որ Տնտեսական խորհուրդը գըն առիթ կ'ընծայէ մեզ վերստին զըրելու մեր ներքին կացութեան վրայ , որ ստուգիւ խիստ հեռի է մխիթարական լինելէ , կացութիւն , ոյր վրայ դարձած է ամեն ժամանակէ աւելի մանաւանդ այժմ առ Ազգն անտարբեր չեղողներու ուշադրութիւնը , և իրաւամբ , վասնզի—ըսենք բացայայտ—մեր ներքին գործոց մասին ամեն բանի մէջ տարկութիւնն ակներեւ է , ի բաց առդաեալ միայն մասնաւորաց կողմէ նույրեալ ջանքերն և զոհողութիւնները որ միակ մխիթարականն են :

Յայտնի է թէ այս վիճակի—որ անհանդուրժելի լինել կը թուի—պարզապէս արդիւնք է այնպիսի պայմանաց , յոր կը գտնուի մեր Վարչութեան Պետոն , որ իւր պաշտօնավարութեան օրէ չկրցաւ դժբաղդարար վայելել ժողովրդականութիւն , որոյ հետեւանոք աւելի զգալի եղած է արդի կացութեան գմնդակութիւնն :

Արդեօք ի՞նչէ դարմանն այս բանի Անձնուիրական զոհողութիւն , ոյր օրինակը պարտի տալ անշուշտ վարչութեան Պետը :

Միրիճնեան վԱՐՃԱՐԾՆ

Սոյն վարժարանի ուսանողաց մըրցանակարաշխի հանդէսն անցեալ կիւրակէ օր կատարեցաւ վայելուչ շքով ընդ նախադահութեամբ իշմիրեան Գեր. Տ. Մատթէոս Ո. Արք եպիսկոպոսի ի ներկայութեան այլոց եկեղեցակա

նաց , կրթական նախարար Վոհեմ. Միւնիֆ փաշայի որդւոյն՝ Վէհապի պէյի՝ որ զիւր հայրն կը ներկայացնէր , նշանաւոր օտարազգեաց և ընտրելագոյն երկուու հոծ բազմութեան :

Ժամ 6 1/2ին հանդէսն սկսաւ դաշնակի վրայ Համիտիէ քայլերգով , զոր յոտնկայս ունկնդրեցին , որմէ յետոյ վարժարանին Հիմնադիր-Տնօրէն Միրիճանեան էֆէնտի տեղեկագիրն ընթերցաւ , յորում ընդհանուր տեսութիւն մը կ'ընէր իւր վարժարանի կըրթական ուղղութեան մասին , բացատրելով լեզուաց կարեւորութիւնը և վաճառականական դպրոցի մը անհրաժեշտ պէտքն , և միանդամայն գոհութեամբ յայտարարեց թէ՝ վերջերս իւր աշակերտք Մէարիփի առջեւ քննուելով արդանացած են վաեմ նախարարին գնահատմանը :

Վէհապի պէյի գրաւոր բանախօսութեամբ մը չնորհակալութիւն յայտնեց առ Տնօրէն Միրիճանեան էֆէնտի :

Աշակերտք հայ . և ֆրանս լեզուաւերկու կատակերգութիւններ ներկայացուցին վայուն յաջողութեամբ և Պ. Արշակ Փափազեան—որդի Ազնուածեւում էֆէնտի Փափազեանի—ութիւն միաւագութիւն ուսանողն խիստ գողտրիկ գրուագ մ'արտասանեց , որ ընդհանուր գոհունակութիւն պատճառեց համայն հանդիսականաց և արժանացաւ բուռն ծափահարութեան :

Միրիճանեան էֆէնտի աշակերտաց նիշերը կարդալով , ոսկեզօծ փառաւոր գրքեր բաշխեց աշակերտաց :

Հուսկ տպա . Նախագահ Արքազանը ի բեմելնելով ծափահարութեանց որութեանութ չոխնդներու մէջէ , ազդային կրթութիւնը՝ տիրող կրթութեան հետ հաշտեցնելու խնդրոյն վրայ խօսեցաւ , բացատրելով գաստիարակին սրբազն պաշտօնք՝ մտքի պատրաստութեան առջեւ , որտի կազմութեան հանդէպ և զնօրէնն ու զաշակերտաց քաջալերելով , կնքեց իւր պերճախօս ատենաբանութիւնը :

Միրիճանեան էֆէնտի ստուգիւ չնորհաւորութեան արժանի է վասնալին ճգանցն , զորս ի գործ կը դնէ ընտիր ծրադրով մը իւր համակրելի վարժարանն ի բարեկարդութեան և ի յառաջադիմութեան պահելու , որմէ կ'օդտուին գէթ գիւրակեաց ծնողք ,

մինչդեռ Մայր-վարժարանն իւր արդի կազմակերպութեամբը դժբաղդարար չկրնար օդակար լինել , թէեւ տարեկան 90,000է աւելի ծախք կը լինի :

Յաւելով կը յիշատակենք զայս պարագայ , հրաւիրելով որոց որ անկէ խորին ուշադրութիւնը . . .

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

Իւրիւտար Ս. Խաչ թաղի Մանկական Պարտիզի առաջին քննութիւնն անցեալ կիւրակէ օր տեղի ունեցաւ ի ներկայութեան հոծ բազմութեան մը , որ եկած էր սոյն գրաւիչ և հաճոյալի հանֆէսը գիտելու :

Յաջողութիւնը կատարեալ էր և ներկայից վրայ խոր տպաւորութիւնն թողուց :

Մեզուածան Հոգարարձութեան Ա. աենադպիր Մեծ . Գրիգոր էֆէնտի Ֆէրատեան ազգու բանախօսութեամբ մը . բացատրեց Մանկական Պարտիզի նպատակը և վարժարանին ընդհանուր վիճակն , որ այսօր կարի գոհացուցիչ է :

Մանկական Պարտէզն 10 աշակերտով բացուած , այսօր ունի իբր 70 աշակերտ . ծախքը ամսական 1200 դր , զբեթէ կը գոցուի տղայոց թոշակովը :

Հոգաբարձութիւնն իւր ամեն ջանքերը կը նույրէ տիպար համար այս Մանկական պարտէզը :

Գոհունակութիւնն իւր ամեն ջանքական զոհութեամբ ընդունուեցաւ . սոյն բանախօսութիւն :

ՄԵԿՆՈՒՄ

Միրիճանեան վարժարանի Հիմնադիր-Տնօրէն Միրիճանեան էֆէնտի օգուտ գաղելով իւր վարժարանի տարեկան արձակուրդէն , այս շաբթու իւր հայրենիքն Օրտու մեկնեցաւ , ուր պիտի մայ քիչ մ'ատեն :

ՊԱՏՈՒԱՆՇԱՅ

Իտալիոյ Վէհ . Աւմպէրթօ թագաւորն Արքազին գործոց նախարարութեան Խորհրդականի Օգնական Զայետան Վայեմ էֆէնտի Գոհական

Դիմակ պատուանշանի երկրորդ աստի
ճանն նօւիրած ըլչալսվ Վեհ: Սուլթանը
կրել արտօնած է զայն:

Վ. ԲԻՒԱԿ

Նախորդ թուով մեր Ազգային Տե-
սութեան մէջ ըստ էլիք թէ Պալատու
թագ: Խորհուրդը կը յապաղէ տալ
նորաշն բառածի հաշիւը, մինչդեռ պէտք
է ըսուի թէ թաղային մատակարարու
թեան հաշիւը գեռ տուած չէ, որում
պէտք է կցեալ լինի նաեւ նոյն հաշիւ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

Հայ և հարբարի բեմ ուսույն դեղեր
Առ 5 կրամ քարածխոյ թթու (ա-
ռ թ-բնիւն), 8 կրամ անուշագրի կիզիչ
ոգի (եռէւր ու սեւ աննետ), 15 կրամ
ալքոոլ, 10 կրամ զտեալ ջուր, և ա-
սոնք խառնէ: Այս հեղուկը ծծուն
թղթոյ մը կամ փոքրիկ գաւաթի մը
մէջ կտոր մը բամբակի վրայ կաթե-
ցուր, և յառաջ եկած բուրումը բեր-
նով և քժով ծծէ: Երկու ժամ մի ան-
գամ ըրէ, մինչեւ որ ազգեցութիւնն
զգաս: Արդիւնքն այն ժամանակ աւելի
զգալի կը լլայ, երբ հարբուխն սկսելուն
պէս այս գեղը գործածուի: որով և
հարբուխի հետ կապուած սաստիկ
հազին առջեւը կ'առնուի: — Դարձեալ
խահրուած և բոլորովին մանրուած
խահուէն ծեծուած շաքարի հետ
խառնէ և վրան անուշագրի կիզիչ ոգի
սրսկէ և օդախիտ թիմեղեայ տփի մը
մէջ պահէ: Երեք ժամ մի անգամ քը-
թախոտի պէս առ երկու օրէն վերջն
ամենասաստիկ հարբուխն ալ կ'անց-
նի: — Թէպէտ և քիչ մը գմնդակ, սա-
կայն շատ ազդու միջոց մըն է պազ
ջրով երկու րոպէ ոտնլուալ ընել ոտըն-
լուայի ժամանակ ոտուրներդ սրածայր
խոզանակով մը չփէ: անմիջապէս դուրս
հանէ և աղէկ մը չորցաւը: ոտնլուայն
առատու ելլելուդ պէս և կամ իրիկունը
քնանալու երթալէդ յառաջ ըբէ: և
ազգեցութիւնն առաջին անգամուն կը
տեսնես: Այս միջոցը ուսւ բժիշկ մը
գտաւ և ասով մեծամեծ օգուտներ
ըրաւ: Միայն թէ տղոց կամ տկար
անձանց համար օդտակար չէ: — Կեր-

կերման առջեւն առնլու միակ միջոցն
է առատու կանուխ բան մը չկերած
գաւաթ մը լաւ շաքարախառն և ըստ
կարի տաք ջուր խմել: նմանապէս ի-
րիկունը: Եթէ կերկերումն այնչափ
սաստիկ ըլլայ, որ կուրծքդ ալ բըռ-
նուի, ամէն ժամ մի անգամ տղտով
(կու-իտնէ) և քացախառն ջրով տաք
տաք կոկորդ ողողէ:

Զան իւղ ունելու դիւրին եղանակ

Շատերը ձկան եղը սիրով չեն առ-
նուր, որովհետեւ ունանց ստամոքսն եղը
չկրնար վերցնել, որով և բնականաբար
այս առողջաբար գեղին դէմ հակա-
ռակութիւն ունեցողներուն թիւը շատ
է: Ասոր առջեւն առնլու համար այն-
պիսի նիւթեր հնարել փորձեցին, որ
ձկան եղի թէ՛ բուժիչ և թէ սնուցիչ
զօրութիւնն ունենան: Փորձը չյաջողե-
ցաւ: Այժմ սովորաբար 90 0/0 ալքոոլ
կը գնեն ձկան եղի մէջ: և ձկան ե-
ղէն բաժանեալ ալքոոլը կը զտեն, ա-
սով այս նիւթս ձկան իւղին բունը կամ
զօրութիւնը կ'ունենայ, և զայս թղթէ
ծրարիկներու մէջ հիւանդաց կուտան-
եւ այսպէս հիւանդն ո՛չ ձկան եղի
գարշահոտութիւնն և ո՛չ համը կը
զգայ: Այս միջոցը ճիշդ այն հետե-
ւութիւնն ունի: զոր կունենար անխառն
ձկան եղն, եթէ գգալով առնուէր:

Ժանդանար լուացներն ազդանան ջրով հուրեւ

Ամանի մը մէջ մաս մը շաքարաթը-
թու, մաս մը լիմոնաթթու, մաս մը ազ
և 8 մաս ալ շաքարաջուր խառնելու
է: Այս բազագրութենէ քանի մը կա-
թիլ բծի վրայ կաթեցնելու է: վերջը
տաք ջրով լեցուն անագեայ ամանի
մը մէջ գնելու է, որով բիծն անմի-
ջապէս կը մաքրուի: Յետոյ բծաւոր
տեղը օճառաջրով նորէն լուալու է:

Հանդէն Ամսօրեայ

ԳՐԱԲԱՌ ԼԵԶՈՒ ԵՒ ԾԱՂԿԱԽԸ

Բժշկական վիճաբանութիւնն, որ
մի քանի շաբաթներէ իվեր սկսած է
Արեւելի մէջ, կը շարունակէ տակա-
ւին, և չէ հնար այժմէն գուշակելթէ
վերջապէս յաղթութիւնը ո՛ր կողման
պիտի մնայ:

Բոլոր այն յօդուածներ, որ գըր-
ուեցան, այս առթիւ կարդացի ուշիու-

շով: Կարդացի նաեւ այս սիւնակնե-
րու մէջ մի շաբաթ առաջ հրատարակ-
ուած «Մրցում» գլխով և «Դիտող»
պոչով զաւեշտական գրուածն, և երբ
կը խորհէի թէ, իբր ճշմարիտ գրա-
բարեան գիտող ոմն ին սեռականը
պէտք է ըլլայ «Դիտողի ուրումն»,
ձեռքս խօթեցին վերջին Մայուն, յո-
րում սոսկալի յարձակում մը ընդդէմ
գրաբառին վերիվայր ըրաւ զիս:

Մարդ մը որ հասարակ ընթերցա-
նութիւնն գրաբառով սովորած, քերա-
կանութիւնը «ի պէտս զարդացելոց»
էն ուսած, և ամբողջ կենացը մէջ ա-
ւելի գրաբառ կարդացած ու իմաս-
տամիրած է քան աշխարհաբար, կը
խնդրեմ ըսէք. ինչ կը լլայ այսպիսի
յարձակման մը առջեւ:

Այս՝ Մայուի այն տողեր վերիվայր
ըրին զիս, և չեմ գիտեր թէ ե՛րբ կա-
րելի պիտի ըլլայ շոկուիլ: այս դիր-
քըն, վերիվայր եղած բնաւ հաճելի
չէ ինձ, և կ'սպասեմ մի նշանաւոր գը-
րաբառեանի յաջող մէկ պատասխա-
նին, որով գրաբառն փրկուի: և ես
իմ նախկին դիրքս գտնեմ իբրեւ ճը-
մարիտ մարդ, որ կը քայլէ ոտիցը վը-
րայ:

Սակայն շատ զարմանալի է որ գը-
րաբառ և ծաղկախտ միւնոյն ժամա-
նակի մէջ, որպէս թէ համամտաբար
նետուին ի հրապարակ: քանզի որչափ
որ գիտե՛ք, աւանց բժիշկ մ'լլալու
գրաբառի և ծաղկախտի մէջ առնչու-
թիւն մը չկայ, և գրաբառն ախտ մը
չէ, որպէս ծաղկախտն չէ՝ գրաբառ:

Գրաբառն ըստ ինքեան լեզու մ'է,
մարդու լեզու և Հայու լեզու, ըստ
բնութեան անիմանալի, որպէս կը սէ
Արփիար Արփիարեան, կամ, որ նոյն
է, Արփիարեան Արփիար, մինչդեռ
ծաղկախտը լեզուն չէ, թէպէտ հմուտ
բժիշկներ կը սէն թէ լեզուի վրայ ալ
կը գոյանայ, և ծաղկախտը, կամ
—բարեցնեթեան օրինօք ախտածա-
ղիկը իմանալի է:

Գալով այն առաջարկութեան, որ
ըրիշէ մը կը սէ Տօքմէօր Տօպրաշ-
եանի կարդալու վաեմափայլ տօքմէ-
օր Փէշտիմալճեան փաշալի հրատարա-
կած պատմութիւն մարդկալին պատ-
ուաստան, գիրքը, շատ զարմանալի
թուեցան մեզ: Մարդ մը, մանաւանդ
բժիշկ մարդ մը՝ որ չորս տարի առաջ

այդ գրքէն օրինակ մը նուէր ընդու-
նած է արդէն Վսեմափայլ Հեղինա-
կէն, և անոր իւրաքանչիւր թերթի
վրայ կապոյտ մատիտով գիտողութիւն-
ներ կամ յիշատակութիւններ ունի,
կարդացած է նաեւ ծաղկախտի վրայ
հրատարակուած ուրիշ հեղինակու-
թիւններ քանի մը հազարի չափ, որ-
պիսի են Պէյրըն, Բիլլուսըն, Վուտըվիլ,
Ճօն Հանդըր, Մօզի, Մուօր, Հէ-
կարդ, Լորէնթա, Պըտճ և Թօնըրս .
Սատթըն. Կրէկօրի, Քլայն, Լէթուն,
Սաքքօ, տը Քառօ. Սիլի, Սըրճօն,
Սայմըն, Մարսըն և Սիթթըն, Քայ-
թըն, Քոլին, կամ վարէն սկսելով գէ-
պի վեր, Քօշին, Քոայթըն, Մարսըն
և Սիթթըն, Սըրճօն Սայմըն, Սիլի,
տը Քառօյ Սաքքօ, Լէթուն, Քլայն .
Կրէկօրի, Սատթըն, Պըտճ և Թօնըրս ,
Լորէնթս, Հէկարդ . Մուօր, Մօզի ,
Ճօն Հանդըր, Վուտըվիլ, Բիլլուսըն ,
Պէյրըն, բժիշկ մարդ մը կ'ըսեմ, որ
այսքան գիրքեր կարդացած է ծաղ-
կախտի վրայ տակաւին երիտասարդ
հասակի մէջ, չէ կարելի որ խորա-
թափանց կերպով իմաստասիրած չըլ-
լայ զծաղկախտն . Եւ ելլել այսպիսի
տօքթէօրի մը ըսել և կարդացէք պատ-
մութիւն մարդկային պատուաստման
գիրքը, եթէ ոչ ծայրայեղ գէթ ծալ
բագոյն կամ երկնած այր միամսութիւն
է :

Բայց, «Որչափ մարդիկ այնչափ
բնութիւն» կ'ըսէ ժողովրդական ա-
ռած մը. կարելի չէ լեզու և գրիչ
զսպել, այս գոնէ խմբագիրք ընտրա-
նօք հրապարակեն իրենց ուղղեալ յօդ-
ուածներ, կամ այսպիսի նախատական
գրուածներ բնաւ չհրատարակեն, որ-
պէս կ'ընեն իրենց մէկ սխալն ուղղող
գրութեանց համար:

Այս հրատարակե՞ն թող իմքա-
դիրք թէ օդերն շատ տաք կ'ընեն այս
օրերս, բայց թող զգուշանան արեւն
յանցապարտ ցուցնելու, հրատարակեն
թող թէ ծովու բաղնիքներու մէջ ան-
մեղ խաղեր կը պատահին, բայց թող
զգուշանան այն անմեղութեանց հեղի-
նակներն մատնանիշ ընելէ: Կախատինք-
ներ են ասոնք, որոց ոչ ոք հաշտ ա-
չօք կընալ հայիլ:

Եւ ի՞նչ, միթէ հրատարակելու
բան կը պակսի, Արեւելք թող օր մը
ի ծննդենէն ի վեր հրատարակած զա-

նազան նիւթոց ցանկը գրէ , օր մը ,
թէ այդքան նիւթոց համար ո՞րքան
տպագրական տառ գործածուած է ,
ուրիշ օր մ'ալ ի՞նչ կ'ըլլայ , թէ որչափ
կէտ , ստորակէտ , վերջակէտ հարկ
եղած է այդ յօդուածոց հրատարակ-
ման առթիւ :

Վարունգը սպառելու մօտ է և
ձմեռուկը կը յաջորդէ անոր . ահա՝
անսպառելի նիւթ մը մի քանի ամ-
սուան համար , Յետոյ խաղող պիտի
ունենանք , յետոյ շիրա , յետոյ զինի .
յետոյ գինովիներ , յետոյ ձմեռ , յետոյ
բռասա , յետոյ շալզամ , քերէվիզ , ըս-
պաննախ , հավուճ և անոր թուրշին ,
լահանայ և թուրշին , և այլ ազգի
ազգի թուրշիներ , որք շատ աղէկ կեր-
թան տիւզին ալ մաստիքքային ալ , ի՞նչ
խմբագիրները շե՞ն խմեր միթէ , քա՛-
լիցի , ես ոչ ասեմ , ալ մանաւանդ-
խրատ ի գործ արկեալ դայլս ուսու-
ցանեմ զի ըմպիցեն ,

Բայց գ-ալով գրաբառին, ինչ որ
ալ ըսեն. պիտի մմայ այն, ահա ա-
նով կ'աղօթենք, անով կը պաղատինք,
անով կուլանք, և Ասուռած քիչ մը
պիտի գժուարի մեզ լսելու եթէ փո-
խենք լեզունիս:

Գալով ծաղկախտին , ահա անով կը
տառապին .ք , անով կը մեռնին .ք , և
պատուաստը հակառակ է բնական օ-
րինաց , պատուաստը՝ որ բարձման
գործողութեան կ'ենթարկէ մահուան
համագումարը ,

Գալով գրաբառին, անիկա մեր
Նախահարց լեզուն է, յաւիտենակա-
նութեան մէջ, ուր պիտի գտնենք
զանոնք, թարգմանի՛ միթէ պէտք ու-
նենայու է՝ ո՞չ, ո՞չ, յաւէտ ո՞չ:

Գայով ծաղկախտին՝ Անիկայ միջոց
մը պիտի ըլլայ բժշկաց երբեմնակի
յօդ-ժամաներուն, և յառաջդիմական
ուսումնասիրութեանց, և արգիլել յա-
ռաջդիմութիւնն՝ վատոգի ցածութիւն
է.

Գալով գրաբառին՝ Աստուած գը-
րաբառ խօսեցաւ Սահակին, Մեսրո-
պին, Լուսաւորչին, Ծնորհալոյն, և
այլոցն ամենեցուն, որոց այսօր է յի-
շատակ, և մեք չեմք կրնար ստիպել
զԱստուած որ այսուհետեւ նոր լեզ-
ւոյ մը խօսի մեզ:

Գալով ծաղկախտին՝ մենէ շատե-
րուն նախահարք՝ հարք՝ մարք՝ քորք

Ժաղկախտով մեռան , և մեք չեմք կը ը-
նար ուրիշ միջոց մը ընտրել . խղճահա-
րութիւն ըսոււած բան մը կայ . թէպէտ
խիղճ ըլլայ ի բազում ժամանակաց
հետէ :

Գալով գրաբառին . . . բայց ո՞չ ,
չեմ ուզեր երկարել պտորոս , ա'լ յոգա
նեցայ . Ես ալ մարդ եմ . և երբ գը-
րաբառէն ի ծաղկախտ և ի ծաղկախ-
տէ ի գրաբառ այսքան յաճախադէպ
երթեւեկութիւն մը կ'ընեմ . հաւա-
տացէք որ միայն օդափոխութեան
համար է . ապա թէ ոչ ինչուս պէտք
ծաղկախտով բժիշկնեւուն իրաւունքը
յափշտակեմ . և գրաբառով՝ Միիթար-
եանց իրաւասութիւնը :

Եւ յետոյ՝ «Հոգւոցն հանգուցելոց՝
Քրիստոս, արա՛ Հանդիսուտ և ողորմու-
թիւն, և մեզ մեղաւորացս չնորհեա,
զժողովթիւն խանցանաց:

ପ୍ରକାଶକ

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԶԱՐԻՔՆԵՐԸ

(Նախորդ՝ Ժուլին)

Քաղաքակրթութեան չարիքներէն
մին ալ կեզծաւորութիւնն եղոծ է :

Արդեօք մեր նախնեաց միտքէն
կանցնէ՞ր թէ կեղծաւորութիւնն , որ
մահացու մեղքերէ միս է , օր մը քա-
զաքական առաքինութեանց կարգը
պիտի դասուէր և կեղծաւորն իրը քա-
զաքակրթեալ ոք պիտի յարգուէր իւր
մարդահաճոյութեանց համար :

Բայց ի՞նչ ըսեր, երբ այս խիստ վը-
նասակար մոլութիւն կը փայլի ամե-
նուրեք. թէ՛ ընկերութեանց մէջ, թէ՛
ազգային շըջանակաց մէջ, թէ՛ գրա-
կան հրապարակի վրայ, թէ՛ յանձին
այն կարդ մ՝ առանձնաշնորհեալ անձ-
նաւորութեանց՝ որ Աժնապատիւ, Գե-
րապատիւ, Արծոնապատիւ, և Բարեկըօն կոչ-
ուելու չնաշխարհիկ արժանաւորութիւն
ունենայ կը թուին :

Երբ անցեալ օր մեր գրառեղանին
առաջը նստած կ'զբադէինք մեր գործ-
ծով, մէյ մ'ալ յանկարծ Ազմօաէ ներս
մտաւ ցասմամբ ու զայրոլթով և
գոչեց զայրացեալ շեշտով մը՝ է՞հ, ի՞նչ
կը գրես, ի՞նչ է այս. գուք խմբագիր-
քըդ ալ կեղծաւոր էք ձեր շահուն
խաթերն համար, մոլութիւնը կը գըդ-
ուէք, մամոնան կը պաշտէք, առաքի-

նութիւնը կը գատապարտէք. և . . . և . . .

— ի՞նչ է, Ազմօտէ, ինչո՞ւ բորբռքեր ու զայրացեր ես, նորէն ի՞նչ պատահեցաւ, ի՞նչ եղաւ. ըսէ՛, շուալուէ:

— ի՞նչ պիտի ըլլայ, անցածները . . . եկեղեցին էի. խիստ փառաւոր յուղարկաւորութիւն մը կը կատար ուէր, եկեղեցական դասն իւր փայլուն ներկայացուցիչներովներկայ էր, եկեղեցին վայելչապէս զարդարուած էր այնպէս, որպէս թէ ակում որ մ'ըլլար ջահերն ու կանդեղները պերճափառ լուսազարդուած էին, եկեղեցական կարգը կը կատարուէր նմանը քիչ անդամ տեսնուած շքեղ փառաւորութեամբ, այնպէս որ կարծես թէ Ազգային անմահ Բարերար Պէզճեան Յարութիւն ամիրայի յուղարկաւորութիւնըն էր որ կը կատարուէր:

Խորին ուշադրութեամբ կը գիտէի և շատ հետաքրքիր էի գիտնալ թէ ո՞վ էր այս հանդուցեալը. ի հարկէ, կըսէի, աւազ՝ Ազգային Բարերար մ'ըլլալու է, և իրաւունք ունէի այսպէս մածելու, մանաւանդ երբ կը յիշէի վսեմ. Նուրեան Էֆէնտիի սա խօսքն թէ Սզդային Բարերար տիտղոսն շատ աժան՝ այն է, և—500 ոսկիի համար մի՛ գործածէք, եթէ կուղէք նոր Պէզճեաններ ունենալ մեր մէջ:

Այս տպաւորութեան ներքեւ մանաւանդ աւելի հետաքրքիր էի իմանալ թէ ո՞վ էր արդեօք այս հանդուցեալն, ոյր անշնչացեալ գիտիին այնքան մեծարանք կը շռայլուէր:

Անհամբերութեամբ կոպասէի գամբանականին, յորում անշուշտ պիտի յիշուէր թէ՝ ներկայ բարեիշատակ հանդուցեալը որպէս սովոր էր ըսել, տիպար էր գեղեցիկ առաքինութեանց և աննման բարերարութեանց, կը ողը բէր արտուուքն աղքատին, առաւտաձեռնութեամբ կը նպաստէր կրթական գործին, և թէ՝ ի նպաստ Ազգային Հիւանդանոցի վերաշինութեան նուիրած է հազարաւոր ոսկիներ, և այլն:

Հուսկ ապա կարգն եկաւ դամբանականին:

Պերճախօս Սրբազնն ելաւ ի բեմ. երկինք, երկիր, արեւ, աստեղք և յուսին իրար խառնեց, շեշտերը, ձեւերը և բացագանչութիւնները ծշմա-

րիտ գերասանական էին. ոաստիկ կը յուզուէր գամբանախօս Սրբազնն և իւր յուզերով կը թուէր յուզել ներկայ յուղարկաւորները, որ սակայն գոգցես բան մը չէին զգար սոյն գամբանականէ, և կարծես անհամբեր էին շուտ աւարտելուն, որ երկարատեւ չեղաւ, այսինքն. ամբողջ օքառորդ ժամ տեւեց:

Ի զուր կոպասէի լսել թուաւմն մասնցն հանդուցելոյն աննման բարերարութեանցը, բայց մեծաւ զարմանօք լսեցի թէ միշտ գաղտնի կը բարերարէ եղեր:

Աչքս չորս կողմ գարձուցի տեսնելու համար իրմէ բարերարեաներ արտօսր ի յաչ, յուզեալ ու կարեւէր ողգայգեաց, բայց տեսայ միայն բազմութիւն մը, որ կը փայլէր սակայն իւր անտարբերութեամբ:

Պերճախօս Սրբազնն հուսկ ապա արտասանեց բայց հանդուցելոյն անունը:

Ընդ այս չկընալով զսպել այլ եւս իմ արդար զալրոյթը՝ բարկութեամբ գուրս ելայ եկեղեցին. զի գիտէի թէ այդ մարդ իւր կենդանութեանը շատ անտարբեր էր առ Ազգն ու եկեղեցին և գիտէի, ինչպէս գիտեն նաեւ շատեր թէ այդ բայց համար իւր հարստութեան և թէ ինչե՛ր ըրած. ու ո՛րպիսի արցունքներու հոսման պատճառ եղած է, և ըսի մատովի՝ «վասն անիրաւ մամոնալի մոլութիւն որբացեալ և կեղծաւորութիւն փառաւորեալ».

Քրքիչ մ'արձակեւով ըսի՝ կը զարմանամ, Ազմօտէ, որ գու գեռ նսր համոզեալ կը թուիս թէ կեղծաւորութիւնն առաքինութեան կարգ անցած է, չե՞ս գիտեր թէ ճշմարտութիւնը գատապարտելի յանցանք է ընդդէմ քաղաքակարիթութեան, այնպիսի քաղաքակարիթութեան, ոյր բառարանն սովորական բառարաններէ բոլորովին տարբեր է.

— Բայց միթէ ձեր պարտքը չէ ուզզել:

— Միայն Ծաղկիկ:

— Ո՛չ, այլ համայն լրագրաց.

— Կը տեսնեմ որ գու գեռ իրաւողայ ես եղեր. լրագրիք նոյնպէս փոխած են իրենց ուղղութիւնը և կը

նմանին վաճառատուններու, որ անձուկ ապրանքներ կը դնեն իրենց սիւնակաց մէջ ի տես և ի վաճառ։ զոր օրինակ՝ կեղծաւորութիւն և չողոքորթութիւն վճարողաց ի հաճոյս և ի հաջոււ։

— Այսպէս միթէ պիտի ուզզեն առաջնորդինմ և ներշնչեն։

— Ճաշակի խնդիր մ'է այդ, որ ընթերցողաց կամքէն կախում ունի։

— Լու, սակայն ի՞նչ պիտի ըսես այն կառագ մը Գերազանցաւուածուած, որ կեղծաւորութիւնն իբր մոլութիւն եկեղեցեաց բեմերէ հարուածելէ յետոյ՝ դարձ. եալ մի և նոյն բեմի վրայէ կը ներկային մեզ իբր տիպար բարերարութեան պանծացնելով լիշատակն այսպիսեաց, որ իրենց բոլոր կենացը մէջ փայլած են առ Ազգն և առ Եկեղեցին անտարբերութեամբ։

— Հասկցայ, Ազմօտէ, որ դուն խօսք հասկնալ չես ուզեր և կը պահանջես որ այդ բայց ելի անձնաւորութիւններ քաղաքակարիթեալ երեւելէ գագրին։

— Ուրեմն, որբավայրերու մէջ ալ պէտք է մուտ գտնէ այդ անիծեալ քաղաքակարիթութիւնը։

— Իբր թէ արդէն մուտ գտած վինիր իւր հետեւանքներով։
(Նարունակելի)

ԲԻՅՈՒԼԻ ԵՑԼԵՆԾԵ

Սարը-եար Եէնի մահալլէտէ Բազար պաշը թէսմիյէ օլընան մահուտէ վտղը չակը լուս պիտի քի չալկը ճշմարտութիւն առաքինութեան փառաւորեալ և կեղծաւորութիւն չալսընար, հալ պու քի Ելլէրինտէն տիկէր պիտի իքի քիշի պունա մուխալիքէ թակէրէք, քէնտի արգատաշշալարնա խիմապէն շու եօլտա իթիրազտա պուլունտուլար՝ է էֆէնտիմ, պիղիմ բէլիմիզի թահսիլ իմմէքէ քայլողին պէօլէ պիտի էմր վէրմէյէ հագզընը օլամազ։

— Աման էֆէնտիմ, բէք կիւզէլ շարգը տըր։

— Եյի ամա, պիղիմ տէտիլիմիզէ մուզայը տըր. Փագաթթ խստէրսէնիզ սիզ քէնտիլիինիզտէն պիտի մէծիտիլէ վէրիկ չալմալարընը էմր էտէպիլիսինիզ։

—ՆԵՇ տէմէք, էֆէնտիմ, պէօլէշ շէյ օլուր մը, մատէմքի բիսոյըլա էլ լէնէճէիզ, պէնիմտէ հազգը օլապիլիր իստէտիյիմ պիր շէյի էմր էթմէյէ:

—Պիզիմ բէկիմիզի թահսիլ էթմէտէն օլամազ եա:

—Մատէմ քի պէօլէտէ տիր, պունտան պէօլէտէ սիզինտէ արզիւ էտտիլինիդ շէյէ պէնիմ բէյիմ օլամայածագ տըր:

իշէրինտէն պիրի, սէն բիսօյա տախիլ օլտուղուն հալտէ մուխալիֆ օլմասը մէֆումսուզ պիր շէյ տիր:

—Նիշին:

—Զիւնքի էքսէրիէթ պիզիմ թարափտա տըր:

—Աճալի՛պ, Ընդհանուր ժողովտամըլը:

—Էֆէնտիմ, հիշ իթիրազ լազըմ տէյիլ, իշտէ նիզամ պու:

Պիրտէ պուարատա իշէրինտէն պիրի կարսօնա էմր էթտի քի պիր գաչ զի շէնկ եագսըն ֆագաթ մէրգում պէն եէմէնիմի թիւրքիւսիւնիւ իստէյէն զաթ տէտի՛ կարսո՞ն՝ պիլմիշ օլասըն քի պէնիմ պու պապտէ ասլա վէ գաթան բէյիմ եօդ տըր, պիլմիշ օլասըն քի հիսէմէ իսապէթ էտէն փարայը վէրմէմ:

Կարսօն պունու իշիտինճէ՛ էօլէ իսէ էվէլա սիզ իշինիզտէ գարար վէրին վէ սօնզրա պանա իստէտիյինիզի էմր էտին տէյիպ իշինէ կիթտի:

Պիզիմ ժէօնժանլար պու կիպի թաթլը ճիվէլերտէն սօլլա՛ նիհայէթ բիսօյըլա իստէտիքլէրինի չալտըրմայա վէ ֆիշէնկ վէ մահիթապլար եագմայա գարար վէրիպ՝ կիւզէլճէ էլլէնմիշէր վէ էլլէնմէքտէ տիրլէր, շիւպհէսիդ էգօնօմիյալը պիր սուրէթտէ, քի պուն տան ասլա խօշանմազլար գազինօնու էֆէնտիլէր, շիւնքի մէրասետի էֆէն տիլէրտէն անճագ խօշաշըրլար. վէ ֆագաթ էսկի չակա շամար շիմտի պար տագ օլտուգլարընտան պիր շիշէ ըրա գըյա պիր չէրեէկ վէ պիր լոգում վէ պիր գահվէյէ ալթմըլ փարայա պէտէքաթ վէրսուն տէմէյէտէ տէ ալըշտը լար իսէտէ, հալ պու քի էհալի տահա հէնուզ ալըշամըլ վէ կէօրիւնիւր քի ալըշամայածագ տըր. իմտի շինտիքի հալ բիուր էյլէնճէյէ կէօրիւնիւր քի գարար գըլընածագ տըր, նասըլ քի մէզքիւր ժէօն-ժանլար իշպու թարիգէ զաթէն սիւլիւք իթմէքտէ տիրլէր:

Ամա գազինօնու էֆէնտիլէր իշպու թարիգտէն բէգտէ խօշանմայաճագրար իսէտէ, գանաաթ իթմէլէրինի քէնտիլէինէ խալիսանէ սուրէթտէ նասահաթ իտէրիզ, շիւնքի սօնզրա պունուտա պուլամայաճագլարընա շին տիտէն էմին օլապիլիրլէր, վէ շունուտա պէյան իտէրիմ քի պուլամատըլլարը հալտէ ազ մէմնուն օլմաեաճաըզ:

—Մարի եիւնյու էսվապլարըն իշին տէ պու սընագլարտա ըստաքօզ կիպի խալանմագտա արը իւստիւնէ պա գընճա եիւրէիմ աճըեօր:

—Պաշ իւստիւնէ, մօտիսթրա հապէր էթ կէլահն իստէտիին կիպի պիր գաչ գաթ եազըզ ֆիստանլար տիքսին:

—Գումա՛շ նէրտէ:

—Էֆէնտիմ, մօտիսթրա գօքէնտիսի պէյէնսին:

—Եա փարա՛սը.

—Ալլահ Ալլահ, տիքսին պիթիրսին տէ. հէփօնի պիր վէրիրիզ, հաթտա սանատա պիր գաչ գաթ իստէտիին կիպի սըմարլա. հիշ չէքինմէ. վէ տահա հէր նէ՛ քի իստէր իսէն սէօլէ. պուն լար պիր շէյ տէյիլ հանկը բէօյտէն խօշանըրսըն:

(Տէվամի)

ԼԱԲԵՍ ՏԱՍԻՒՐԱՆՍ

Պէրի Վէ ՊԱՀՐԻ ՀԱՐԻՔ Վէ ԳԱԶԱՑԱ ԳԱՐԵՌՈՒ ՍԻԿՈՒՐԹԱ ԳՈՒՄԲԱՆԵԱՍԸԸ

Թէէ. Ինստի աքչէսի 50000000

Ինթիեաթ աքչէսի 300000

Ալթը սէնէի միթէճավուզ 8էրսատէթտէ ինքայի մուամէլէ իւս կէմէքտէ օլան մէզքիւր քումքանհանըն մու մէլաթը ձարիյէնին տահա պի հիւսնի սուրէթլէ ճէրէցանը զըմնընտա պու քէրրէ ումում մէմալիքի օ մանիյէ աճնթուլը էօնտէի տնիղանէմէ ինալէ ի իլտիկինտէն պատէմա էմլաք վէ էշեա վէ սազիրէ դայէթ միթէտի ֆիյաթ վէ հաֆջալըք մէտիյաթ շէրաիթէ տախի մուամէլէ ինքառը վէ գազա գուգույի ազապինտէ թաղմին իտէճէկի թամահւտ իտէր վէ քումքանիոյը մէզքիւրըն թազրա աճէնթուլընա թալէպ պուլունտուզու թագտիրտէ մէրքէդ լատրէէ միւրաճաթլարը թազիյէ ոլունուր:

Ումում թուրքա աճէնթա սը

Բ. Շէջիրկեան

Մէրքէզ իտարէ Ստամպօլ Պահմէ գարու նօրիկատիս խան նօմէր 1

ՏԵՐ ԵՒ ՏՆՕԵՆ

Յ. Թ. ՉԱԽՄԻՇԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան թէ իւր վաճառաւ ատն մէջ կը շինուին և կը նորոգուին, կոտրած, վասուած, աւրուած եւրոպ պական ամէն տեսակ գործիք. ինչպէս կաղի կամ իւզի լամպաներ. աշանակներ. անկողնարանք. շիրինկաներ. տուշեր սամավարներ և յախճապկեալ կոտրած որ և է նիւթեր. ըստ ամենայնի, մաքուր վայելուչ և նորէն աւելի հաստատուն:

ԻՇԻՄԻԶ ՈԼՏՈՒ

Կէօգիւն այտըն, Գաթին. Գալը սօնումուզ կէլտի:

—ՆԵՇ օ, հալըր օլու:

—Հայըր տըր, հայըր, չաբուգ էլտէն շուր բագըներ կէթիր:

—Բէք էյի ամա, նէ՛ օլմուշ, օնու սէօլէ պանա:

—Սէօլէեէճէեիմ. շինտի պանա

սէօլէ, հանկը քէօյիւ հազ էտէրսին .

—Էքմէքնի չէթէլէսինին սիլինմէսին զէրէ սօն ճէվապը տիքտի:

—Օ պիր շէյ տէեիլ. սէն հանկը քէօյի կիթմէսինի արզիւ իտէրսին:

—Քէօչէտէքի պագալըն հիսագընըն թէմիզէնմէսինի:

—Օտա պիր շէյ տէեիլ, սէն սօր տուղումա ճէվապ վէր:

—Գասապա օլան պօրճուն սիլինմէսի:

—Այ էֆէնտիմ օտա պիր շէյ տէյիլ օտա թէմիզէնէճէգ. սէն շուր տէտիկի մէ ճէվապ վէր:

—Եփին քիրասը իւչիւ կէչտի. մալ սահապը պիզի տիշարը աթաճագ էյէր պու այ պաշը հիսապը թէմիզէնմէսի:

—Օտա պիր շէյ տէեիլ. սէն շուր սօրքուզումա ճէվապ վէր:

—Քէօմիւրնիւ եարըն սապան վաստի ըայըը ալմատան շուրայա ատըմաեագ տըր:

—Հէլէ պու հիշ պիր լէյ տէեիլ, սէն հանկը քէօյիւ հազ էտէրսին:

Նաեւ, սոյն վաճառատան մէջ կը գանուին, եւրոպական ընտիր լամպա. զեր, աշտանակներ ընտիր տպակի խոզակներ որոց համար հասարակութիւնը միշտ կը գանդատի թէ չկան աստ. կլօպնեց և ամեն տեսակ պատ. ըոյներ, մէկ խօսքով, լանպայի վերաբերեալ ամեն բան ինչպէս նաեւ պանեօ և չինկոյէ լուացարաններ և տուշ ընելու համար պէտք եղած ամէն կերպ գործիք:

Դիները յոյժ չափաւոր են. զի մեր գործարանի սկզբունքն է ՃԵԴՈՒԹԻՒՆ եկամուտը ՀԱՅՈՑԱՐՄՈՒԹԻՒՆ:

***—Փորձով գիտեմք և բնաւ տարակոյս չունիմք թէ յիշեալ ճարտարաբուեստ աղգայնայն գործերէն մեծապէս գոհ պիտի ըլլան մեր աղգայինք և այլ եւս իւրեանց, այս կարդի պիտերն հոգալու համար ոիրայօժար պիտի գիմեն նոյն վաճառատուն և գործարան՝ փոխանակ այլ տեղեր յաճախելու, մինչ սա վստահութեան ամէն պայման կ'ընծալէ իւր յաճախորդաց:

Օ՞ն ուրեմն, գիմեցէք անդ և փորձեցէք:

— 52 —

Ե:

ԺԱՄԱԴՐԱՎՈՅՆ

Լիւսի, պարտիզին շրջապատէն անցնելով, արագ քայլերով Սապլէօզի կողմը կը յառաջանար: Անծանօթ երիտասարդը գետոյն միւս եղբը իրեն կ'սպասէր: Ակնթարթի մը մէջ իրարու հանդիպեցան: Առանց բառ մ'արտասանելու, բազուկներով պատեց զնա և սրտին վրայ զօրաւոր կերպով սեզմեց: Երթանց շօշափում մը տեղի ունեցաւ Ո՛չ միայն համբոյր մ'էր այդ, այլ իրարու նուիրեալ երկու հոգիներու միացում մը: Հիացման վայրկենի մէջ ինքնինքնին գտան:

Վերջապէս կաղամախիի մը ներքեւ տարաւ և ծառոյն ճիւղերուն մէջտեղ կանդ առին:

— Յիրելիս, ըստ նմա, երբ կը մտածեմ այն վտանգներուն վրայ որոց գէմ կը դնես գալ ինձ վայրկեան մը հրճուանք և երջանկութիւն տալու, կը յանդիմանես զիս, այլ եւս արժանի չեմ տեսներ զիս քո անձին. քո սիրոյն ամբողջ իմ կեանքս է. և երբ սիրու քննելէ վերջ, քո սրտին մէջ կը կարդամ անհուն անձնուիրութիւն, այն ատեն անձնասիրութեանս վրայ կ'ամաշեմ, Ո՛հ չափազանց քըն. նող պիտի գտնես զիս:

ԼԱՓԷՍ

ՏԱՍԻՒԻՌԱՆՈՒ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՆԴԴԵՄ ՀՐԴՔԻ ԵԽ ԾՈՎՈՒ

ՀԻՄՆԵԱԼ ԲԱՐԻԶ

Քարիթո կարանթի 50,000,000 ֆր.

ՀՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԹՈՒՐՔԻՈՑ

Բ. ՇԵՀԻՐԼԵՈՆ

Կ. ՊՈՂԻՍ ՊԱՂէ-քարու Եօրկիատիս խան նօ. 1

— 49 —

Հրացանը ձգեց և ագարակէն գուրս եւ լաւ, ըսելով

— Յտեսութիւն, օրիորդ Լիւսիլ, և շնորհակալութիւն: Պիտի իմացնեմ ԺԵՆԵՎԻ վի թէ իրեն վրայ մտածէք. և արագարար հեռացաւ:

Արեգակը գեռ նոր մարը մտած էր: Վայրկեսէ մը վերջ, ագարակին գործաւորները և նոյն աւուր մանչերը եկան, ճաշը պատրաստ էր, սեղան նստան:

Ժամը իննին, գործաւորներն որք ամենքն Ռէմիքուորի մէջ կը ընակէին ագարակէն մեկնած էին: Արջառները ախուրին մէջ դրուած էին և ոչուարաց հօտերը՝ փարախին մէջ:

Լիւսիլ իւր սենեկին մէջ կը գտնուէր, այն ժամուն կ'սպասէր յորում ամեն ոք պառկած պիտի լինէր ինք կարենալ գուրս ելնելու անշուք և անձայն: Այն մետաքսահիւս նուրբ վերաբերուն զոր ուսերուն վրայ պիտի անցնէր, անկողնոյն վրայ պատրաստ կը կենար: Ճրագը մարած էր. կընար կարծուիլ թէ՝ պառկած էր:

Ամէն գռներուն փակուելու ձայնը յաջորդարար լսեց, ինչպէս նաեւ սպասաւորաց իրարու գիշեր բարի՝ մաղթելն:

ՅՈՎՀ, ՍԱՄՈՒԵԼԵԱՆ ԸՆԿ.

45 Պեյման Միլեր խան, Հայաքիս 45

Գ. Յուրի, Օման Մէջադէ. Աղթագարտութիւն Քէր


ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՑ 038Բ

ՊԱՏԻ, ԳՐՈՒՆԻ, ՈՍԿԻ, ԱՐՄԱԹԻ

ԵՒ ՆԻՔԵԼԻ

ԳՈՀԱՐԵՂԵՆՓ

Ապարանչաններ, Պոռաններ, Օղեր, Մատանիններ, Մետայններ, Գաւազանի գուլումներ և այլն :

Փոքրաքանակ և մեծաքանակ
վաճառութիւնՎաճառառութիւնը յանձն կառնու ամէն
տեսակ նորոգութիւններ, ժամացոյցի և գոհա
ղինաց յանձնարարութիւններ:Կարենքենաններ կը նորոգութիւններ յեռացի հոգութ
ժամանորժ ջենոբ Մէրհանեանի:

— 50 —

Ժամը տասնին քառորդ մը մնացած, խո-
րին լուսթիւն մը կը տիրէր ագարակին մէջ:
Ժամը հասած էր. Լիւսիլ և թէ ամէն ոք
կը ննջէր: Կը սխալէր: Երկու մարդիկ արթուն
էին և կ'սպասէին իրեն նման, իւր հայրն և թի-
էռ Ռուվընա: Վերարկուրն մէջ փաթթուեցաւ
և սենեկէն գուրս ելաւ գաղտագողի: Թեթե-
ւաքայլ սանգուղէն վար իջաւ, շունչը բռնե-
լով, արագաբար մեծ որահէն անցաւ, բայց
դուռ մը զոր կրկին գոցելու նեղութիւնը յան-
ձըն չառաւ, և մտաւ նեղ նրբանցքի մը մէջ
որոյ ծալրը կը գտնուէր գուրս ելնելու դըռ-
նակն որոյ վրայ արդէն խօսեցանք: Զգուշա-
կան միջոցներով զապանակը քաշեց, գուռը բա-
ցաւ առանց աղմուկի և գուրս նետեց ինքը-
զինքը:

Անոր ետեւ, ժաք Մէլիէ, իւր սենեկին
գուռը բացած էր, անոր նման լուսթեամբ
վար իջած էր: Այդ պահուն եթէ կարելի ըլ-
լար նայիլ ինքզինքը հայելոյ մը մէջ, չը պի-
տի ճանաչէր: Դիմակի մը դէմքն ունէր:

Մեծ սրահին մէջ, խարխափելով գտաւ հը-
րացանը. յետոյ խուլ մանջում մ'արձակելով,
դէպի նրբանցքին մէջ նետուեցաւ:

ՄԱՅԵՐ ԳՈՒՄԲԱՆԵԱՍԸՆԸՆ
ՐՈՒՊԱ ՄԱՂԱԶԱԼԱՐԸԳԵՅՈՎԱՐՈՒ ԹՈՒՆԵԼ ԳԱՐՇՃԱԸ
ՍՏԱՄՊՈԼ ՔէՕՓՐԻՒ ՊԱՇԸՊէօյիւք ատամլար, գարըլար, տէլիգանլար, գըզլար
վէ չօնուգլար իչիւն հազըր վէ ըսմարլամա էնվայի րուպա-
լար, ֆանէլալար, շմայիէլէր, էլտիվէնլէր վէ զայրիհիւմ վէ
լայրիհիւմ:Հէր օն պէշ կիւնտէ մէվսիմէ մախսուս մօտա մալլար վիւ
րուտ իտէնէք տիր:Սաթըլան մալլէրին քեափփէսի՝ պիրինճի վէ տայանագլւ
վէ տիւգկիւն մալլար տըր:Մայէր գումբանեամընըն գախտէսի տայմա էկթի վէ էջ-
վէն ՄԱԼ ԱՍԹՄԱԳԻ տան իպարէթ պուլունմուշ օլտուզը
պիր զիյարէթէ մաղաղամըզը թէշորիփ իտէն բաղպէթըու
միւշտէրիէլէր կէօրէճէքլէր տիր:

Շիւպէ ԻՍՔԵՆՏԵՐԻՑ վէ ԳԱՀԻՐԻ ԻՉՄԻՐ վէ ՍէԼԱՆԻԿ

Հայտէյին պագալը ՄԱՅԻՐԻ

— 51 —

Բիէռ Ռուվընաի դէմ ելաւ. ճամբան գոց-
ուած էր.

— Ժամը, ուր կ'երթաս, հարցուց նմա:

— Թող տուր զիս, պատասխանեց ագարա-
կապետը դադան ձայնիւ մը:

— Ո՛չ, գուրս չը պիտի ելնե՞ս:

— Թող տուր զիս, կ'ըսեմ, ետ քաշուէ՛,
թո՞ղ տուր որ անցնիմ:— Վա՛տ, գոչեց Մէլիէ, բարկութենէն սաս.
տիկ կատղած:Եւ յարձակելով հաւատարիմ ծառային վը-
րայ, անձնուէր բարեկամին վրայ, կոկորդէն
բռնեց և վանեց վայրենի սաստկութեամբ և
գաղանական ձեւով մը:Թուվընա կրունցուց իւր հաւատարակշուռ-
թիւնը, ինկած միջոցին, գլուխը հանդիպեցաւ
սեղանին անկեան և տախտակամածին վրայ
գլորեցաւ գրեթէ առանց գիտակցութեան:Մէլիէ առանց իսկ գիտնալու թէ ինչ ըրած
էր, տունէն գուրս ելաւ, մերկ գլխով, կատ-
ղած, կուրացած, գրեթէ յիմարացած և պար-
տիզին մէջ սկսաւ արշաւել: